Հունվարի 8, 2016

Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդականի (ՀԱՊ) գրասենյակ

Լիազորությունների շրջանակ

ՀԱՊ-ի համապատասխանության ստուգմանն ուղղված առուդիտ ՀՀ <<Լիդիան Ինթերնեյշնլ>> ծրագրում ՄՖԿ-ի կողմից կատարված ներդրումների վերաբերյալ

Ծրագիր #27657

Բողոքներ 01 և 02 / Գնդեվազ և Ջերմուկ

Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդականը (ՀԱՊ)

ՀԱՊ-ի առաքելությունն է ծառայել որպես խնդիրների լուծման անաչառ, վստահված, արդյունավետ ու անկախ մեխանիզմ և բարելավել Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) և Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալության (ԲՆԵԳ) հաշվետվողականությունը բնապահպանական և սոցիալական ոլորտներում:

ՀԱՊ-ն անկախ մարմին է, որն ուղղակիորեն հաշվետու է Համաշխարհային բանկի խմբի նախագահին: Այն դիտարկում է բողոքներ՝ ստացված այն համայնքներից, որոնք տուժել են Համաշխարհային բանկի խմբի մասնավոր հատվածին աջակցող երկու ճյուղերի՝ ՄՖԿ-ի և ԲՆԵԳ-ի կողմից իրականացվող ծրագրերի արդյունքում:

Եթե ՀԱՊ-ը եզրակացնում է, որ կողմերը չեն ցանկանում կամ չեն կարող լուծել վեճը ՀԱՊ-ի աջակցությամբ, ապա գործը փոխանցվում է ՀԱՊ-ի՝ Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկողության ստորաբաժանում գնահատման և հնարավոր առուդիտի անցկացման նպատակով:

ՀԱՊ-ի համապատասխանության ապահովման գործընթացն ուղղված է ՄՖԿ/ԲՆԵԳ-ի կողմից ներդրման գնահատմանն ու վերահսկողությանը, ինչպես նաև ստուգելու նրանց գործունեության համապատասխանությունը իրենց իսկ քաղաքականության դրույթներին՝ համոզվելու համար, որ ներդրումներն ուղղվել են գործունեության բնապահպանական և

սոցիալական ոլորտներ: ՄՖԿ/ԲՆԵԳ-ի հաճախորդը չի հանդիսանում ՀԱՊ-ի աուդիտի օբյեկտ:

Համաշխարհային բանկի խմբի նախագահին, Գործադիր տնօրենների խորհրդին, ՄՖԿ/ԲՆԵԳ-ի ավագ ղեկավարությանը և հանրությանն իր որոշումների ու պատճառաբանության մասին իրազեկելու նպատակով ՀԱՊ-ը ներկայացնում է աուդիտի արդյունքները համապատասխան զեկույցում:

Ավելի մանրամասն տեղեկատվություն ստանալու համար այցելե՛ք ՀԱՊ-ի կայք հետևյալ հղմամբ՝ www.cao-ombudsman.org:

Ներածական տեղեկատվություն ներդրումների վերաբերյալ

Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդը (այսուհետ՝ ընկերությունը) Բրիտանիայում հիմնված և Տորոնտոյի (Կանադա) ֆոնդային բորսայում (գնադրում՝ TSX:LYD) ցուցակագրված կրտսեր հանքարդյունաբերական կազմակերպություն է: Հայաստանում այն իրականացնում է Ամուլսարի ոսկու հանքի ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր): Վերջինս ղեկավարվում է Գեոթիմ ՓԲԸ-ի կողմից, որի բաժնետոմսերի 100%-ը պատկանում է Լիդիանին: ՄՖԿ-ն առաջին անգամ ընկերությունում նեղրում է կատարել 2007 թ. ֆինանսավորելու համար Կոսովոյում, Հայաստանում և Թուրքիայում Լիդիանին պատկանող հանքային ռեսուրսներին առնչվող հետազոտման աշխատանքներն ու տեխնիկական հիմնավորումը: Այս նախնական ներդրմանը հաջորդել են լրացուցիչ ներդրումներ և բաժնետոմսերի երաշխավորագրի տրամադրում: Ներկայումս ՄՖԿ-ին է պատկանում Լիդիանի բաժնետոմսերի 7.9 տոկոսը, ինչը կազմում է 17.3 միլիոն կանադական դոլար ներդրումների տեսքով:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ) նույնպես հանդիսանում է ընկերության բաժնետեր:

Սույն տեխնիկական առաջադրանքը գրելու պահին ծրագիրը գտնվում էր իրագործելիության առաջընթաց փուլում: Իրագործելիության մանրակրկիտ ուսումնասիրությունն ու Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն (ՇՄԱԳ) իրականացվեցին 2014 թ. հուլիսին, իսկ 2014 թ. նոյեմբերին ընկերությանը տրվեց հանքարդյունահանման թույլտվություն: Միջազգային չափանիշներին համապատասխանող Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումը (ԲՍԱԳ) հրապարակել է 2015 թ. մայիսին: Ծրագրի շրջանակներում ստորագրվել են համաձայնագրեր շինարարության ֆինանսավորման համար՝ նպատակ ունենալով իրականացնել ոսկու ամբողջական արտադրություն 2017 թ.:

Բողոքները

Առաջին բողոքը ներկայացվեց ՀԱՊ-ին 2014 թ. ապրիլին ծրագրի գործունեության տարածքի հարևանությամբ գտնվող Գնդեվազ գյուղի և Ջերմուկ քաղաքի բնակիչների կողմից, ում աջակցում էին 9 հասարակական կազմակերպություն (ՀԿ): Բողոքարկուների մտահոգությունները վերաբերում էին ծրագրի առնչությամբ շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների անցկացման նպատակահարմարությանը, ինչպես նաև հետագա ծրագրերի հնարավոր ազդեցությանը շրջակա միջավայրի ու մոտակա համայնքների վրա:

Բողոքում վերհանված խնդիրները ներառում են քննադատություն ընկերության կողմից իրականացված ազգային ՇՄԱԳ-ի գործընթացի, ինչպես նաև ՄՖԿ-ի գործունեության չափանիշների և ազգային կանոնակարգերի ենթադրյալ խախտումների վերաբերյալ: Բացի այդ, ՀԱՊ-ի գնահատման փուլում ծրագրի շահագրգիռ կողմերը բարձրացրին լրացուցիչ մտահոգություններ մշակութային ժառանգության և Հայաստանում Համաշխարհային բանկի կողմից իրականացվող ծրագրի վրա հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ:

Երկրորդ բողոքը ներկայացվեց ՀԱՊ-ին 2014 թ. հուլիսին Վայոց ձորի մարզի Գնդեվազ գյուղի 148 բնակչի կողմից: Բողոքարկուները հայտնում էին մտահոգություններ ապրուստի միջոցների, շրջակա միջավայրի և համայնքի առողջության վրա ծրագրի ունեցած հետևանքների վերաբերյալ: Բողոքում մասնավորապես նշվում են ծրագրի առնչությամբ պատշաճ տեղեկատվության, այդ թվում՝ հողատարածքների ձեռքբերման և վերաբնակեցման ծրագրերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության պակասը, նախագծով կառուցվող ցիանային հարթակի կառուցման արդյունքում շրջակա միջավայրի հնարավոր աղտոտումը, արոտավայրերի, անասունների և արտերի վրա բացասաբար ազդող աղտոտված փոշին, աշխատողների և համայնքի առողջական խնդիրները, ինչպես նաև համայնքի անբավարար ներգրավվածությունը:

Աուդիտի շրջանակը

Համաձայն ՀԱՊ-ի՝ Լիդիան-01[1] և Լիդիան-02[2] բողոքներին առնչվող Համապատասխանության փորձաքննության 2015 թ. զեկույցների՝ այս ծրագրի՝ այն որպես հանքային ոլորտում վաղ ներդրում դիտարկող որոշակի կողմերի վերանայումը կարող է ավելի լավ հաղորդել քաղաքականությունների կիրառումը սույն, ինչպես նաև հետագա ծրագրերում:

Այս համատեքստում ՀԱՊ-ը որոշեց միասին դիտարկել Լիդիան-01 և Լիդիան-02 բողոքներում բարձրացված խնդիրները: Ուստի, վերոնշյալ երկու գործերը միացվեցին աուդիտի անցկացման նպատակով:

Համաձայն ՀԱՊ-ի լիազորագրի՝ աուդիտը կենտրոնանում է ՄՖԿ-ի, ինչպես նաև գնահատման և վերահսկողության ընթացքում վերջինիս կողմից բնապահպանական և սոցիալական գործունեության ոլորտում կատարված ներդրումների երաշխավորման վրա:
ՀԱՊ-ի Գործառնական ուղեցույցը (մարտ 2013)[3] տալիս է համապատասխանության ստուգմանն ուղղված աուդիտի հետևյալ գործնական սահմանումը.

<<Աուդիտը>> փաստերի օբյեկտիվ ձեռքբերման և գնահատման կանոնավոր, փաստաթղթերով ձևակերպվող գործընթաց է, որն ուղղված է որոշելու բնապահպանական և սոցիալական գործողությունների, պայմանների, կառավարման համակարգերի կամ այլ

---

[1] ՀԱՊ-ի Համապատասխանության փորձաքննության մասին զեկույց, Լիդիան-01, ապրիլ 2015՝ http://goo.gl/GWpgZm

[2] ՀԱՊ-ի Համապատասխանության փորձաքննության մասին զեկույց, Լիդիան-02, ապրիլ 2015՝ http://goo.gl/ddr6fv

[3] ՀԱՊ-ի Գործառնական ուղեցույց, 2013՝ http://goo.gl/Hc46c8

համապատասխան տեղեկատվության համապատասխանությունը աուդիտի չափանիշներին:

Ինչպես նշվել է գնահատման զեկույցում, ՀԱՊ-ը կիրականացնի աուդիտ ՄՖԿ-ի՝ հաճախորդ-ընկերությունում կատարված ներդրումների առնչությամբ՝ հաշվի առնելով բողոքում բարձրացված խնդիրները: Աուդիտի անցկացման վերաբերյալ որոշում կայացնելիս ՀԱՊ-ը նշել է, որ մինչ այժմ ՄՖԿ-ն միայն ֆինանսավորել է հանքի կառուցման նախապատրաստական աշխատանքները, իսկ բուն հանքի կառուցման վերաբերյալ որևէ որոշում չի կայացվել: Այնուամենայնիվ, համաձայն ՀԱՊ-ի՝ ՄՖԿ-ի կողմից ընկերությունում կատարված ներդրումները հստակ նպատակ էին հետապնդում հնարավորություն ստեղծել հանքի կառուցման համար: ՀԱՊ-ի Համապատասխանության փորձաքննության վերաբերյալ զեկույցների հրապարակումից հետո որոշվել է ֆինանսավորել հանքի կառուցումը:

ՄՖԿ-ի բնապահպանական և սոցիալական (ԲՍ) քաղաքականությունների, Գործունեության չափանիշների և ընթացակարգերի համատեքստում ՀԱՊ-ը վերհանել է ներդրումներին առնչվող հետևյալ հարցերը.

- Արդյոք ՄՖԿ-ի կողմից ծրագրի սահմանումն ու նախաներդրումային վերլուծությունը համապատասխանում են ԲՍ ռիսկերի մակարդակին և ծրագրի ազդեցությանը:
- Արդյոք նշված ներդրման կառուցվածքը պատշաճորեն հաշվի առնում է ծրագրի հնարավոր երկարաժամկետ ռիսկային հետևանքները և ժամանակի ընթացքում ռիսկի պրոֆիլի հնարավոր փոփոխությունները:
- Արդյոք պատշաճ էր ՄՖԿ—ի կողմից ծրագրի փոփոխվող ռիսկի պրոֆիլի վերահսկողությունը:

Համապատասխանության ստուգմանն ուղղված աուդիտի շրջանակը նաև ներառում է ՀԱՊ-ի կողմից վերհանված ցանկացած անհամապատասխանության հիմքում ընկած անմիջական պատճառների պարզաբանում:

Աուդիտն ու նախնական ժամանակացույցը

Համաձայն նախնական ժամանակացույցի՝ ՀԱՊ-ը պետք է պատրաստի աուդիտի վերաբերյալ նախնական զեկույցը մինչ 2016 թ. մայիսի վերջը:

Այնուհետև վերոնշյալ փաստաթուղթը կուղարկվի ՄՖԿ-ի ավագ ղեկավարությանը և բոլոր համապատասխան վարչություններին փաստերի վերանայման և մեկնաբանություններ ստանալու նպատակով: ՄՖԿ-ի մեկնաբանությունները պետք է գրավոր ներկայացվեն ՀԱՊ-ին ՄՖԿ-ի կողմից զեկույցը ստանալուց 20 աշխատանքային օրվա ընթացքում:

ՄՖԿ-ից զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ մեկնաբանություններ ստանալուց հետո ՀԱՊ-ի Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկման

ստորաբաժանումն ավարտուն տեսքի կբերի զեկույցը: Զեկույցի վերջնական տարբերակը կներկայացվի ՄՖԿ-ի ավագ ղեկավարությանը պաշտոնական պատասխան ստանալու նպատակով: Համապատասխան ծանուցումը կտեղադրվի ՀԱՊ-ի կայքում, ինչից հետո ՄՖԿ-ը կարող է ՀԱՊ-ին ներկայացնել գրավոր պատասխան 20 աշխատանքային օրվա ընթացքում: Այնուհետև, ՀԱՊ-ը կփոխանցի աուդիտին առնչվող զեկույցը և ՄՖԿ-ի պատասխանը Համաշխարհային բանկի խմբի նախագահին: Վերջինս չի կարող բովանդակային փոփոխություններ կատարել աուդիտի մասին զեկույցում, սակայն կարող է օգտվել աուդիտի արդյունքները ՀԱՊ-ի հետ քննարկելու հնարավորությունից:

ՄՖԿ-ի ավագ ղեկավարության պատասխանով բավարարված լինելու դեպքում նախագահը կհաստատի աուդիտի մասին զեկույցը և ՄՖԿ-ի պատասխանը: Վերոնշյալ փաստաթղթերի հաստատումը կատարվում է Նախագահի հայեցողությամբ: Հաստատումից հետո ՀԱՊ-ը կուղարկի Աուդիտի մասին զեկույցն ու ՄՖԿ-ի պատասխանը Գործադիր տնօրենների խորհրդին: Այն նույնպես կծանուցի բոլոր շահագրգիռ կողմերին ՀԱՊ-ի կայքում երկու փաստաթղթերի հրապարակման մասին և կուղարկի դրանք բողոքարկուներին:

Ան կ ախ փո ր ձ ագ ե տն ե ր

Համաձայն ձևավորված գործելակերպի՝ սույն առաջադրանքի վրա աշխատելու նպատակով ՀԱՊ-ը կներգրավի մեկ կամ ավել անկախ փորձագետների: Սույն աուդիտի մասնագիտական խմբի համար ՀԱՊ-ն անհրաժեշտ է համարում հետևյալ որակավորումները.

- Էական փորձ բնապահպանական և սոցիալական ռիսկերին և ազդեցություններին առնչվող խնդիրների ոլորտում՝ մասնավորապես, արդյունահանող արդյունաբերությանն առնչվող միջազգային ֆինանսավորման համատեքստում,
- ՄՖԿ-ի ԲՍ քաղաքականությունների, չափանիշների և ընթացակարգերի իմացություն,
- Աուդիտի անցկացմանն առնչվող փորձ և գիտելիքներ,
- Քաղաքականությունների և մեթոդաբանության վերլուծության ու բարդ ինստիտուցիոնալ համատեքստում բարելավումների առաջարկներ մշակելու ապացուցելի կարողություն,
- Շահագրգիռ կողմերի ներգրավման և նրանց հետ խորհրդատվությունների անցկացման փորձ: